**Արձանագրություն N 5**

**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«05» «Մայիսի» 2018թ.
ժամը 10:15

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Գ. Սահակյան |
| Հանձնաժողովի անդամներ | Ա.Մկրտչյան<br>Ք.Գյուրջյան<br>Ա.Սահակյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ.Մնացականյան |
| Բացակայում էր | Ն.Թովմասյան |

*1.* **Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին**

---

***(Գ.Սահակյան)***

Առաջնորդվելով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Հարցման պատասխանը ստացվել է 25.01.18թ.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

*2.* ***Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին***

---

***(Գ.Սահակյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 502-Ն որոշման 2.1 և 2.2 ենթակետերը՝ որոշվել էր առաջարկել «Տելիա-Մեդ» ՓԲԸ, «Հերմինե Ֆարմեց», «Մ.Լ.Ն Ֆարմ», «ՖԱՐՄ-ԱԴԱՄԱ» ՍՊԸ-ներին և Սանոֆի Պաստեր ընկերությանը ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Կազմակերպությունների կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել մինչև սահմանված վերջնաժամկետին՝ 09.02.2018թ.

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## 3. Գնման ընթացակարգին առնչվող հարցերի, դրանց վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումների մասին

---

**(Գ.Սահակյան)**

Հաշվի առնելով, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, ՀՀ առողջապահության նախարարությունը 21.12.17թ. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից ստացել էր գրություն, որում հարց էր բարձրացնում պայմանագիր կնքելու ժամանակ գինը սահմանելու արժույթի վերաբերյալ, մասնավորապես, քանի որ Մրցույթին մասնակցել և որոշ չափաբաժիններով առաջին տեղ էր զբաղեցրել ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, ուստի պայմանագիրը ըստ հրավերի պետք է կնքվի արտարժույթով, մինչ դեռ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ը գրությամբ խնդրել էր անցկացնել նոր մրցույթ՝ հիմք ընդունելով որ հրավերում սահմանված չի եղել ՀՀ դրամով առավելագույն գին սահմանելու պայմանը՝ արտարժույթով պայմանագիր կնքվելու դեպքում: Այս հարցը պարզաբանելու նպատակով ՀՀ առողջապահության նախարրությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հաշվի առնելով, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ևս մասնակցել է ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություն և զբաղեցրել առաջին տեղ, ուստի այս հարցը բարձրացվել է սույն մրցույթի շրջանակներում: Արդյունքում Սանոֆի Պաստեր ընկերության կողմից ներկայացվեց առաջարկ, ըստ որի Ընկերությունը համաձայն կլինի կնքել պայմանագիր՝ ըստ որի պայմանագրի գինը կֆիքսվի ՀՀ դրամով՝ հայտերի բացման օրվա դրությամբ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքին համարժեք, իսկ վճարումները կկատարվեն փոխարժեքով հաշվարկված արտարժույթով, բայց ոչ ավել քան ՀՀ դրամով հաշվարկված պայմանագրային գումարը: Միաժամանակ, վերջինս նշեց, որ վերոնշյալ պայմանի և պայմանագրի գնի չափով կանխավճարի դեպքում կհամաձայնվի կնքել պայմանագիր: Հաշվի առնելով, որ Կազմակերպության կողմից ներկայացված առաջարկները հրավերով չեն սահմանվել, ուստի ՀՀ առողջապահության նախարարությունը պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանման, պայմանագրի գնի սահմանման և վճարման վերաբերյալ առաջարկին դիտողություններ չունի, իսկ ինչ վերաբերվում է կանխավճարին, ապա այն պետք է նախատեսվեր հրավերով, հակառակ դեպքում այն կհակասի գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը 20.04.18թ. ներկայացվել է Սանոֆի Պաստեր ընկերության: Վերջինս 02.05.18թ. ներկայացրել է իր դիրքորոշումը:

Արձանագրությանը կցվում են սույն հարցին առնչվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## 4. Ընթացակարգի ամփոփման մասին

---

**(Գ.Սահակյան)**

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և ՀՀ կառավարության 28.12.17թ. թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության 2018թ. գնումների պլանը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել /կից հավելվածով ներկայացվում է գնումների պլանով հաստատված և մասնակիցների կողմից ներկայացված գները/՝

✓ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին՝ 14-րդ չափաբաժնի մասով՝ 90.028.800 դրամ պայմանագրային գումարով:

✓ «Ֆարմ Ադամա» ՍՊԸ-ին՝ 15-րդ չափաբաժնի մասով՝ 73.035.000 դրամ պայմանագրային գումարով:

2. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի **1,2,7** չափաբաժինները հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, իսկ **3,4,5,6,8,9,10,11,12,13** չափաբաժինները՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, *որոշվեց «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի* անգործության ժամկետ սահմանել 2018 թվականի մայիսի 6-ից մինչև մայիսի 15-ը ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------ Գ. Սահակյան

Անդամներ՝ ------------------ Ա.Մկրտչյան

------------------ Ն. Թովմասյան

------------------ Ք. Գյուրջյան

------------------ Ա. Սահակյան

Քարտուղար՝ ------------------ Հ. Մնացականյան

| Հ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | Հաստատված միավոր գին | Հաստատված գին | «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ | | | | | «Սանոֆի Պաստեր» | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Միավորի գին՝ առանց ԱԱՀ եվրո | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ եվրո | Գումար՝ առանց ԱԱՀ եվրո | ԱԱՀ եվրո | Գումար՝ ներառյալ ԱԱՀ եվրո |
| 1 | 33651214/302 | ԲՑԺ /տուբերկուլոզի դեմ/ պատվաստանյութ | դոզա | 170.000 | | - | | | | | | | | | | |
| 2 | 33651680/301 | Հեպատիտ Բ պատվաստանյութ/մանկական/ | դոզա | 42.500 | | - | | | | | | | | | | |
| 3 | 33651680/302 | Հեպատիտ Բ պատվաստանյութ /մեծահասակներ/ | դոզա | 20.000 | 254,00 | 5.080.000 | 959,40 | [redacted] | 19188000 | 3837600 | 23025600 | | | | | |
| 4 | 33651262/303 | Հնգավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում/հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ) պատվաստանյութ | դոզա | 112.500 | 480,00 | 54.000.000 | | | | | | | | | | |
| 5 | 33651263/302 | Վեցավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, ՈՉ բջջային կապույտ հազ, փայտացում /հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ-ԻՊՎ՝ ինակտիվացված պոլիոմիելիտ) պատվաստանյութ | դոզա | 42.500 | 11.000,00 | 467.500.000 | | | | | | 19,95 | 19,95 | 847875 | | 847875 |
| 6 | 33651670/301 | Օրալ երկվալենտ պոլիոմիելիտի պատվաստանյութ | դոզա | 231.128 | 115,00 | 26.579.720 | | | | | | | | | | |
| 7 | 33651264/302 | Ռոտավիրուսային միավալենտ պատվաստանյութ | դոզա | 82.000 | | - | | | | | | | | | | |
| 8 | 33651259/302 | Պնևմակոկային 13-վալենտ կոնյուգացված պատվաստանյութ | դոզա | 148.000 | 1.837,00 | 271.876.000 | | | | | | | | | | |
| 9 | 33651266/301 | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի-կարմրախտի-խոզուկի դեմ/ | դոզա | 98.000 | 1.795,00 | 175.910.000 | | | | | | | | | | |
| 10 | 33651223/302 | ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում) պատվաստանյութ | դոզա | 146.700 | 91,00 | 13.349.700 | | | | | | | | | | |
| 11 | 33651220/303 | Սեզոնային գրիպի պատվաստանյութ | դոզա | 60.000 | 2.390,00 | 143.400.000 | 2.015,83 | [redacted] | 120950000 | 24190000 | 145140000 | 3,00 | 3,00 | 180000 | | 180000 |
| 12 | 33651258/304 | Տուլարեմիայի պատվաստանյութ | դոզա | 33.000 | 870,00 | 28.710.000 | | | | | | | | | | |
| 13 | 33651200/306 | Մենինգակոկային կոնյուգացված (պոլիվալենտ՝ A, C, Y, W-135 շտամներով) պատվաստանյութի | դոզա | 19.200 | 12.585,00 | 241.632.000 | | | | | | 20,90 | 20,90 | 401280 | | 401280 |
| 14 | 33651260/303 | Հեպատիտ Ա պատվաստանյութ | դոզա | 19.200 | 8.085,00 | 155.232.000 | 3.907,50 | 4.689,00 | 75024000 | 15004800 | 90028800 | | | | | |
| 15 | 33651199/302 | Կատաղության պատվաստանյութ | դոզա | 15.000 | 5.800,00 | 87.000.000 | | | | | | 10,30 | 10,30 | 154500 | | 154500 |

| Հ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | Հաստատված միավոր գին | «Սանոֆի Պաստեր» | | | | | «Ֆարմ Ադամա» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Միավորի գին՝ առանց ԱԱՀ դրամ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ դրամ | Գումար՝ առանց ԱԱՀ դրամ | ԱԱՀ դրամ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ դրամ | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| | | | | | | | | | | | | | | | ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ 2018/2 |
| 1 | 33651214/302 | ԲՑԺ /տուբերկուլոզի դեմ/ պատվաստանյութ | դոզա | 170.000 | | | | | | | | | | | |
| 2 | 33651680/301 | Հեպատիտ Բ պատվաստանյութ/մանկական/ | դոզա | 42.500 | | | | | | | | | | | |
| 3 | 33651680/302 | Հեպատիտ Բ պատվաստանյութ /մեծահասակներ/ | դոզա | 20.000 | 254,00 | | | | | | | | | | |
| 4 | 33651262/303 | Հնգավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում/հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ) պատվաստանյութ | դոզա | 112.500 | 480,00 | | | | | | | | | | |
| 5 | 33651263/302 | Վեցավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, ՈՉ բջջային կապույտ հազ, փայտացում /հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ- ԻՊՎ՝ ինակտիվացված պոլիոմիելիտ) պատվաստանյութ | դոզա | 42.500 | 11.000,00 | 11.548,86 | [redacted] | 490826358,8 | | 490826359 | | | | | |
| 6 | 33651670/301 | Օրալ երկվալենտ պոլիոմիելիտի պատվաստանյութ | դոզա | 231.128 | 115,00 | | | | | | | | | | |
| 7 | 33651264/302 | Ռոտավիրուսային միավալենտ պատվաստանյութ | դոզա | 82.000 | | | | | | | | | | | |
| 8 | 33651259/302 | Պնևմակոկային 13-վալենտ կոնյուգացված պատվաստանյութ | դոզա | 148.000 | 1.837,00 | | | | | | | | | | |
| 9 | 33651266/301 | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի-կարմրախտի-խոզուկի դեմ/ | դոզա | 98.000 | 1.795,00 | | | | | | | | | | |
| 10 | 33651223/302 | ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում) պատվաստանյութ | դոզա | 146.700 | 91,00 | | | | | | | | | | |
| 11 | 33651220/303 | Սեզոնային գրիպի պատվաստանյութ | դոզա | 60.000 | 2.390,00 | 1.736,67 | 1.736,67 | 104200200 | | 104200200 | | | | | |
| 12 | 33651258/304 | Տուլարեմիայի պատվաստանյութ | դոզա | 33.000 | 870,00 | | | | | | | | | | |
| 13 | 33651200/306 | Մենինգակոկային կոնյուգացված (պոլիվալենտ՝ A, C, Y, W-135 շտամներով) պատվաստանյութի | դոզա | 19.200 | 12.585,00 | 12.098,80 | 12.098,80 | 232296979,2 | | 232296979 | | | | | |
| 14 | 33651260/303 | Հեպատիտ Ա պատվաստանյութ | դոզա | 19.200 | 8.085,00 | | | | | | | | | | |
| 15 | 33651199/302 | Կատաղության պատվաստանյութ | դոզա | 15.000 | 5.800,00 | 5.962,57 | [redacted] | 89438505 | | 89438505 | 4.057,50 | 4.869,00 | 60862500 | 12172500 | 73035000 |
| | | | | | | | | | | 916762043 | | | | | |

| Չ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | Հաստատված միավոր գին | «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ | | | | | «Արմեն ֆարմ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | 33651214/302 | ԲՑԺ /տուբերկուլոզի դեմ/ պատվաստանյութ | դոզա | 170.000 | | | | | | | | | | | |
| 2 | 33651680/301 | Հեպատիտ Բ պատվաստանյութ/մանկական/ | դոզա | 42.500 | | | | | | | | | | | |
| 3 | 33651680/302 | Հեպատիտ Բ պատվաստանյութ /մեծահասակներ/ | դոզա | 20.000 | 254,00 | | | | | | | | | | |
| 4 | 33651262/303 | Հնգավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում/հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ) պատվաստանյութ | դոզա | 112.500 | 480,00 | | | | | | | | | | |
| 5 | 33651263/302 | Վեցավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, ՈՉ բջջային կապույտ հազ, փայտացում /հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ-ԻՊՎ՝ ինակտիվացված պոլիոմիելիտ) պատվաստանյութ | դոզա | 42.500 | 11.000,00 | | | | | | | | | | |
| 6 | 33651670/301 | Օրալ երկվալենտ պոլիոմիելիտի պատվաստանյութ | դոզա | 231.128 | 115,00 | | | | | | | | | | |
| 7 | 33651264/302 | Ռոտավիրուսային միավալենտ պատվաստանյութ | դոզա | 82.000 | | | | | | | | | | | |
| 8 | 33651259/302 | Պնևմակոկային 13-վալենտ կոնյուգացված պատվաստանյութ | դոզա | 148.000 | 1.837,00 | | | | | | | | | | |
| 9 | 33651266/301 | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի-կարմրախտի-խոզուկի դեմ/ | դոզա | 98.000 | 1.795,00 | | | | | | | | | | |
| 10 | 33651223/302 | ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում) պատվաստանյութ | դոզա | 146.700 | 91,00 | | | | | | | | | | |
| 11 | 33651220/303 | Սեզոնային գրիպի պատվաստանյութ | դոզա | 60.000 | 2.390,00 | | | | | | | | | | |
| 12 | 33651258/304 | Տուլարեմիայի պատվաստանյութ | դոզա | 33.000 | 870,00 | | | | | | | | | | |
| 13 | 33651200/306 | Մենինգակոկային կոնյուգացված (պոլիվալենտ՝ A, C, Y, W-135 շտամներով) պատվաստանյութի | դոզա | 19.200 | 12.585,00 | | | | | | | | | | |
| 14 | 33651260/303 | Հեպատիտ Ա պատվաստանյութ | դոզա | 19.200 | 8.085,00 | | | | | | | | | | |
| 15 | 33651199/302 | Կատաղության պատվաստանյութ | դոզա | 15.000 | 5.800,00 | 4500,00 | 5400,00 | 67500000 | 13500000 | 81000000 | 4530,00 | 5436,00 | 67950000 | 13590000 | 81540000 |

| Հ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | Հաստատված միավոր գին | «Տեխս-Մեդ» ՓԲԸ | | | | | «Մ.Լ.Ն.Ֆարմ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | 33651214/302 | ԲՑԺ /տուբերկուլոզի դեմ/ պատվաստանյութ | դոզա | 170.000 | | 558,02 | [redacted] | 94863680,00 | 18972736,00 | 113836416,0 | | | | | |
| 2 | 33651680/301 | Հեպատիտ Բ պատվաստանյութ/մանկական/ | դոզա | 42.500 | | | | | | | | | | | |
| 3 | 33651680/302 | Հեպատիտ Բ պատվաստանյութ /մեծահասակներ/ | դոզա | 20.000 | 254,00 | | | | | | | | | | |
| 4 | 33651262/303 | Հնգավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում/հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ) պատվաստանյութ | դոզա | 112.500 | 480,00 | | | | | | 794,43 | [redacted] | 89373375 | 17874675 | 107248050 |
| 5 | 33651263/302 | Վեցավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, ՈՉ բջջային կապույտ հազ, փայտացում /հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ- ԻՊՎ՝ ինակտիվացված պոլիոմիելիտ) պատվաստանյութ | դոզա | 42.500 | 11.000,00 | | | | | | | | | | |
| 6 | 33651670/301 | Օրալ երկվալենտ պոլիոմիելիտի պատվաստանյութ | դոզա | 231.128 | 115,00 | | | | | | | | | | |
| 7 | 33651264/302 | Ռոտավիրուսային միավալենտ պատվաստանյութ | դոզա | 82.000 | | | | | | | | | | | |
| 8 | 33651259/302 | Պնևմակոկային 13-վալենտ կոնյուգացված պատվաստանյութ | դոզա | 148.000 | 1.837,00 | | | | | | | | | | |
| 9 | 33651266/301 | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի-կարմրախտի-խոզուկի դեմ/ | դոզա | 98.000 | 1.795,00 | | | | | | | | | | |
| 10 | 33651223/302 | ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում) պատվաստանյութ | դոզա | 146.700 | 91,00 | 373,99 | [redacted] | 54864810,00 | 10972962,00 | 65837772,0 | | | | | |
| 11 | 33651220/303 | Սեզոնային գրիպի պատվաստանյութ | դոզա | 60.000 | 2.390,00 | | | | | | | | | | |
| 12 | 33651258/304 | Տուլարեմիայի պատվաստանյութ | դոզա | 33.000 | 870,00 | 1.186,06 | [redacted] | 39139850,00 | 7827970,00 | 46967820,0 | | | | | |
| 13 | 33651200/306 | Մենինգակոկային կոնյուգացված (պոլիվալենտ՝ A, C, Y, W-135 շտամներով) պատվաստանյութի | դոզա | 19.200 | 12.585,00 | | | | | | | | | | |
| 14 | 33651260/303 | Հեպատիտ Ա պատվաստանյութ | դոզա | 19.200 | 8.085,00 | | | | | | | | | | |
| 15 | 33651199/302 | Կատաղության պատվաստանյութ | դոզա | 15.000 | 5.800,00 | | | | | | | | | | |

| Հ/Հ | CPV | Անվանում | Չափման միավորը | Քանակ | Հաստատված միավոր գին | «Նաիրի Ֆարմ» ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | 33651214/302 | ԲՑԺ /տուբերկուլոզի դեմ/ պատվաստանյութ | դոզա | 170.000 | | | | | | |
| 2 | 33651680/301 | Հեպատիտ Բ պատվաստանյութ/մանկական/ | դոզա | 42.500 | | | | | | |
| 3 | 33651680/302 | Հեպատիտ Բ պատվաստանյութ /մեծահասակներ/ | դոզա | 20.000 | 254,00 | | | | | |
| 4 | 33651262/303 | Հնգավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, բջջային կապույտ հազ, փայտացում/հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ) պատվաստանյութ | դոզա | 112.500 | 480,00 | | | | | |
| 5 | 33651263/302 | Վեցավալենտ (ԱԿԴՓ՝ դիֆթերիա, ՈՉ բջջային կապույտ հազ, փայտացում /հեմոֆիլուսային Բ վարակ/ հեպատիտ Բ- ԻՊՎ՝ ինակտիվացված պոլիոմիելիտ) պատվաստանյութ | դոզա | 42.500 | 11.000,00 | | | | | |
| 6 | 33651670/301 | Օրալ երկվալենտ պոլիոմիելիտի պատվաստանյութ | դոզա | 231.128 | 115,00 | | | | | |
| 7 | 33651264/302 | Ռոտավիրուսային միավալենտ պատվաստանյութ | դոզա | 82.000 | | | | | | |
| 8 | 33651259/302 | Պնեմակոկային 13-վալենտ կոնյուգացված պատվաստանյութ | դոզա | 148.000 | 1.837,00 | | | | | |
| 9 | 33651266/301 | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի-կարմրախտի-խոզուկի դեմ/ | դոզա | 98.000 | 1.795,00 | | | | | |
| 10 | 33651223/302 | ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում) պատվաստանյութ | դոզա | 146.700 | 91,00 | | | | | |
| 11 | 33651220/303 | Սեզոնային գրիպի պատվաստանյութ | դոզա | 60.000 | 2.390,00 | | | | | |
| 12 | 33651258/304 | Տուլարեմիայի պատվաստանյութ | դոզա | 33.000 | 870,00 | | | | | |
| 13 | 33651200/306 | Մենինգակոկային կոնյուգացված (պոլիվալենտ՝ A, C, Y, W-135 շտամներով) պատվաստանյութի | դոզա | 19.200 | 12.585,00 | | | | | |
| 14 | 33651260/303 | Հեպատիտ Ա պատվաստանյութ | դոզա | 19.200 | 8.085,00 | 6.648,33 | 7.978,00 | 127648000 | 25529600 | 153177600,0 |
| 15 | 33651199/302 | Կատաղության պատվաստանյութ | դոզա | 15.000 | 5.800,00 | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

16.04.18թ. № 03/27-1/7005-18

Ձեր № ____________________

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.03.2018թ.
թիվ ՆՋ/06.3/2985-17 և 03.04.18թ.
թիվ ՆՋ/06.3/3778-18 գրությունների

Հարգելի պարոն Ջուլոյան

Ուսումնասիրելով վերոհիշյալ գրությունները, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նշում կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի մասին՝ պայմանով, որ ընտրված մասնակիցը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Այսինքն կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի վերաբերյալ պայմանը նախատեսվում է հրավերով:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ տվյալ պարագայում Ձեր 03.04.18թ. թիվ ՆՋ/06.3/3778-18 գրությամբ նշված ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրում կանխավճար նախատեսելը պետք է բխեր հրավերի պահանջներից: Ընդ որում, կնքվելիք պայմանագրում կանխավճարի պայման նախատեսելու առաջարկը (հրավերում կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի վերաբերյալ պայման նախատեսված չլինելու պարագայում) չի բխում գնման գործընթացի մյուս մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ ապահովելու պահանջից:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ հիշյալ գրությամբ նշված ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրում 100 տոկոս կանխավճարի պայման

նախատեսելը հակասում է վերոնշյալ որոշմանը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի տրամաբանությանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ձեր 17.03.2018թ. թիվ ՆՁ/06.3/2985-17 գրությամբ ներկայացված առաջարկության վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չունենք

Հարգանքով՝ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____________N _____________
Ձեր N _________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Ղեկավարվելով ՀՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի փետրվարի 26-ի թիվ 04/27-1/3374-18 գրության, ըստ որի առաջարկվել է, «...եթե ՀՀ ոչ ռեզիդենտ մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է արտարժույթով և ճանաչվել ընտրված մասնակից, ապա վերջինիս հետ կնքվող պայմանագրում գինը պետք է նախատեսվի ներկայացված արտարժույթով, պայմանով, որ արտարժույթով իրականացվելիք վճարումների հանրագումարը չպետք է ավել լինի հրավերով նախատեսված փոխարժեքով փոխարկերպման արդյունքում ձևավորված ՀՀ դրամից:»:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություն: Հրավիրված բանակցության ժամանակ, վերջինիս ներկայացվել է ՀՀ ֆիանսների նախարարության կողմից ներկայացված վերոնշյալ առաջարկը: ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը հայտնել է, որ պատրաստ է նշված պայմանով կնքել պայմանագիր, միայն մի բացառությամբ, որ պայմանագիր կնքելիս պայմանագրային գինը կֆիքսվի ՀՀ դրամով՝ հայտերի բացման օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքին համարժեք: Իսկ վճարումները կկատարվեն վճարման օրվա

փոխարժեքով հաշվարկված արտարժույթով, բայց ոչ ավել քան ՀՀ դրամով հաշվարկված պայմանագրային գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեր դիրքորոշումը պայմանագրի գնի և փաստացի վճարումների փոխարժեքների սահմանման առաջարկի վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ  ՆԵԼՍՈՆ ՁՈՒԼՈՅԱՆ

**Կատարող** Համիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. (060) 80-80-03 (1703)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 — հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_______________N _______________
Ձեր N _______________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱՋՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Ի լրումն ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի մարտի 17-ի ՆՁ/06.3/2985-18 գրության, առաջացել է լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն: Մասնավորապես, «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում, ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպությունը դիրքորոշում է ներկայացրել համաձայնվել կնքել պայմանագիր վերոնշյալ գրությամբ ներկայացված պայմանի և 100% կանխավճարի տրամադրման դեպքում: Անհրաժեշտ է փաստել, որ հայտարարված գնման ընթացակարգի հրավերում կանխավճարի հատկացման պայման սահմանված չի եղել: Միաժամանակ, վերջինս համաձայն է իջեցնել իր կողմից նախկինում առաջարկված գնային առաջարկը՝ վերոնշյալ պայմանների ընդունման դեպքում:

Խնդրում եմ Ձեր դիրքորոշումը՝ ներկայացված առաջարկների պարագայում ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կնքվելիք պայմանագրում, գրություններում նշված երկու պայմանները նախատեսելու հնարավորության վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ

**Կատարող** Համիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական վարչություն
հեռ. (060) 80-80-03 (1703)

| ՀՀ | Ծանուցման վերնագիր | Մրցույթի ծածկագիրը |
|---|---|---|
| 10 | Գնահատման արդյունքներ | ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2 |

<< () < () 1 () 2 () 3 () 4 () 5 () > () >> ()

| | |
|---|---|
| Պատվիրատու | ՀՀ առողջապահության նախարարություն |
| Մրցույթի ծածկագիր | ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2 |
| Մրցույթի վերնագիր | ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2 |
| Ուղարկող | Հասմիկ Մնացականյան |
| Ստացող | Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերություն, Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերություն<br>ՄՀ-ին կցագրված բոլոր ՊՊԳՊ օգտվողները |
| Ամսաթիվ | 27/04/2018 |
| Նամակի վերնագիր | Պարզաբանում |
| Բովանդակություն | Հարգելի Մասնակից Բարձրացված հարցերի /կանխավճար, պայմանագրի գնի և փաստցի վճարումների փոխարժեքների սահմանման/ վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն /կից ներկայացվում է վերոհիշյալ գրությունները/: Խնդրում եմ Ձեր դիրքորոշումը՝ գնման ընթացակարգը վերջնական ամփոփելու նպատակով: Կանխավ շնորհակալ եմ |
| Կցված փաստաթուղթ | *Desktop.zip (/ppcm/private/manual-notification/download-file?id=f5bf2e68-7465-4141-b856-f158bf52fe81&name=Desktop.zip)* |

"IUNETWORKS" © 2015. (http://iunetworks.am)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3 հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

_____________N _______________
Ձեր N _______________

ՆՁ/06.1/1579-18
13.02.18թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թամազյան

Տեղեկացնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության 2018թ. կարիքների համար դեղերի ձեռքբերման համար հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել ՀՀ ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որը գնային առաջարկը ներկայացրել է ԱՄՆ դոլարով:

Հիշյալ գնման ընթացակարգի շրջանակներում, ՀՀ առողջապահության նախարարությունը գրություն է ստացել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ից, որին ՀՀ առողջապահության նախարարությունը 2017 թվականի դեկտեմբերի 28-ին պատասխանել է ՆՁ/06.1/16149-17 գրությամբ (գրությունները կցվում են): Ընդ որում, ՀՀ առողջապահության նախարարության պատասխանի հիմնական բովանդակությունը կայանում է նրանում, որ կնքված պայմանագրի գինը ՀՀ դրամով կարող է բարձրանալ՝ արտարժույթի գնի բարձրացման պարագայում:

Հիշյալ գնման ընթացակարգի հրավերում (կցվում է) սահմանված է եղել արտարժույթով գնային առաջարկը ՀՀ դրամով համեմատելու կարգը, սակայն նշված չի եղել արտարժույթով կնքվող պայմանագրում փոխարժեքի տատանման դեպքում ՀՀ դրամով առավելագույն գին սահմանելու պայման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փոխարժեքի տատանման դեպքում հրավերում ՀՀ դրամով առավելագույն պայմանագրային գնի սահմանման պայմանների

չսահմանելը, խնդրում եմ Ձեր դիրքորոշումը ՀՀ առողջապահության նախարարության հետագա քայլերի ուղղությամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ


Կատարող Համիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական բաժին
հեռ. (060) 80-80-03 (1703)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800.132
Վեբ կայք՝ www.minfin.am

04/27-1/3374-18
26 02 18թ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՆԵԼՍՈՆ ԶՈՒԼՈՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ԻՆ

Ի պատասխան Ձեր 13/02/2018թ.
թիվ ՆՁ/06.1/1579-18 և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի
15/02/2018թ. թիվ 01-15 գրությունների

Հարգելի պարոն Զուլոյան

Ուսումնասիրելով վերոհիշյալ գրությունները՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 15-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում.

- 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.

- 34-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են ՀՀ դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամաններով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերով սահմանված է, որ անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը գտնում ենք, որ եթե ոչ ռեզիդենտ մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է արտարժույթով՝

• ապա հանձնաժողովը պետք է այն փոխակերպի ՀՀ դրամի՝ իրավակտերով նախատեսված փոխարժեքով և գնային առաջարկների համեմատումն իրականացնի ՀՀ դրամով,

• և ճանաչվել ընտրված մասնակից, ապա վերջինիս հետ կնքվող պայմանագրում գինը պետք է նախատեսվի ներկայացված արտարժույթով, պայմանով, որ արտարժույթով իրականացվելիք վճարումների հանրագումարը չպետք է ավել լինի իրավակտերով նախատեսված փոխարժեքով փոխարկերպման արդյունքում ձևավորված ՀՀ դրամից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

______________ N ______________
Ձեր N ______________

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՍԱՏՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ասատրյան

Ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 21.12.2017թ. N 01/21 գրությունը՝ տեղեկացնում եմ, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը կազմվել է լիազոր մարմնի կողմից սահմանված օրինակելի ձևով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի, եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով:

Հիմք ընդունելով վերոհիշյալ հոդվածը՝ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.5 կետով սահմանվել է. «Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով»:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված նկատառմանը, որ վերոհիշյալ գնման ընթացակարգը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի

9-րդ մասին, ապա ցանկանում եմ նշել, որ «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.5 կետը հանդիսանում է օրենքով պահանջվող կարգի սահմանում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, հարկ եմ համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը նպատակահարմար չի գտնում վերոհիշյալ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը կամ վերահայտարարելը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՆԵԼՍՈՆ ՋՈՒԼՈՅԱՆ

Կատարող՝ Համիկ Մնացականյան
Ֆինանսատնտեսագիտական բաժին
հեռ. (060) 80-80-03 (1703)

Նատալի Ֆարմ
Натали Фарм
Natali Pharm

0181 21.12.2017թ.

ՀՀ Առողջապահության Նախարարության
Աշխատակազմի ղեկավար
Պարոն Ն. Զուլոյանին

Հարգելի պարոն Զուլոյան

ՀՀ Առողջապահության նախարարությունը հրապարակել է բաց մրցույթ հրավեր, մեկ փուլով, Էլեկտրոնային գնումների Արմեպս համակարգի միջոցով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/1/2» ծածկագրով (այսուհետ՝ Մրցույթի հրավեր), որին մասնակցություն են ունեցել մի շարք ընկերություններ, այդ թվում «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն և «ՓԱՐԹՆԵՐՇԻՓ ՖՈՐ ՍԱՓԼԱՅ ՉԵՅՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԻՆՔ» ընկերությունները:

Մեր կարծիքով Մրցույթի հրավերը հակասում է Գնումների մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին և նշված Մրցույթի հրավերի շրջանակներում կայացված արդյունքները պետք է վերանայվեն և անցկացվի նոր մրցույթ: Այսպես, համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի նշված հոդվածի.

«Հոդված 28. Հրավերի բովանդակությունը

1. Հրավերը պետք է պարունակի՝

9) նախապես ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.»

Մրցույթի հրավերը չի պարունակում գնի հաշվարկման կարգը այն դեպքում, երբ գինը ներկայացվել է արտարժույթով: Մրցույթի հրավերի կետ 8.5. անդրադառնում է միայն առաջարկների համեմատությանը:

«8.5 .... Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանց համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով: »

Այսինքն, այս կետը կարգավորում է, թե համեմատությունը ինչպես է կատարվում, բայց հստակ չի նկարագրում, որ համեմատության օրը կիրառվում է համապատասխան փոխարժեք և սահմանվում է ապրանքի գինը ՀՀ դրամով, մինչդեռ հստակ կարգ պետք է նկարագրված լիներ:

Մրցույթի հրավերի տառացի մեկնաբանությունից ելնելով Մրցույթի հաղթող ոչ ռեզիդենտը, որը ԱՄՆ դոլարով գին է ներկայացրել կարող է հաղթել մրցույթը, քանի որ համեմատության կատարման պահին իր առաջարկը ԱՄՆ դոլարով ավելի ցածր է, բայց հետագայում պահանջել ՀՀ առողջապահության նախարարությունից վճարումները կատարել ԱՄՆ դոլարով, քանի որ Հրավերը չի կարգավորել գինը սահմանելու կարգը: Այդ պահանջը եթե նույն մերժվի ՀՀ առողջապահության նախարարության կողմից, Մրցույթի հաղթողը դատական կարգով կարող է հաջողության հասնել:

«Նատալի ֆարմ» ՍՊԸ ք. Երևան, Աբովյան 42/2, հեռ. (+374 10) 74 42 12, 72 06 20; ֆաքս՝ 74 42 20
«Натали Фарм» ООО г. Ереван, ул Абовяна 42/2, тел. (+374 10) 74 42 12, 72 06 20; факс: 74 42 20
«Natali Pharm» Ltd Yerevan RA, # 42/2 Abovyan st., tel. (+374 10) 74 42 12, 72 06 20; fax: 74 42 20

Եթե ՀՀ առողջապահության նախարարությունը հետագայում կիրառի Մրցույթին ներկայացված գինը ԱՄՆ դոլարով վճարումների համար, ապա ապրանքի դիմաց վճարումը հետագայում ՀՀ դրամով կարող է ավելի բարձր լինել, քան մեր Ընկերության կողմից Մրցույթին ներկայացված ՀՀ դրամով գինը:

Կարծում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի խախտումը հանգեցնում է Մրցույթի անվավերությանը և առաջարկում ենք կայացնել համապատասխան որոշում և հայտարարել նոր մրցույթ՝ կարգավորելով հրավերում արտարժույթով ներկայացված առաջարկի ՀՀ դրամով գնի որոշման կարգը:

Բացի վերը նշվածից, ընդհանուր առմամբ գտնում ենք, որ ՀՀ ռեզիդենտի և Մաքսային միության անդամ չհանդիսացող ոչ ռեզիդենտի միջև Մրցույթի հրավերը պետք է որոշակի առանձնահատկություններ սահմանի՝ հաշվի առնելով հավասար մրցակցության սկզբունքները: ՀՀ տարածքում գործող ընկերությունը վճարում է ԱԱՀ և շահութահարկ իր գործունեությունից և առաջարկված գործարքից, իսկ ոչ ռեզիդենտը չի կատարում այդ վճարումները ՀՀ տարածքում: Եթե ոչ ռեզիդենտը գրանցված է բարենպաստ հարկային գոտում, ապա ՀՀ տարածքում գործող ընկերությունը որևէ դեպքում չի կարող առաջարկել մրցունակ գին բաց մրցույթի հրավերների ժամանակ: Այս խնդրի մեջ առանձին լրացուցիչ կառուցվածքներ և հիմնավորումներ կներկայացնենք, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Մրցույթի հրավերը խախտում է Օրենքը և չի սահմանում արտարժույթով ներկայացված առաջարկի ՀՀ դրամով գնի որոշման կարգը, խնդրում ենք անցկացնել նոր մրցույթ:

Հարգանքներով՝

Գլխավոր տնօրեն՝ Ա. Ասատրյան

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ Ն. ԶՈՒԼՈՅԱՆԻՆ

ՍԱՆՈՖԻ ՊԱՍՏԵՌ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՕՐՎԱԾ ԱՆՁ ԷԴՈՒԱՐԴ ԿԱՍՅԱՆԻՑ

ք. Երևան 02.05.2018թ.

Հարգելի պարոն Զուլոյան,

Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերությունը մասնակցել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով բաց մրցույթին և ՀՀ Առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ բաց մրցույթով պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 19.01.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ 5-րդ, 11-րդ և 13-րդ չափաբաժիններով:

Այնուհետև, Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերության և ՀՀ Առողջապահության նախարարության միջև տեղի են ունեցել երկարատև բանակցություններ՝ մի շարք հարցերի շուրջ, ինչի արդյունքում հայտնում ենք, որ Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերության համար պատվաստանյութերի ձեռքբերման պայմանագրում գնի՝ միայն ՀՀ դրամով նախատեսումն ընդունելի չէ, քանի-որ մրցույթի հրավերով նախատեսված է եղել մասնակիցների կողմից արտարժույթով գնային առաջարկների ներկայացման և պայմանագրի կնքման հնարավորություն: Սանոֆի Պաստեռ բաժնետիրական ընկերության կողմից

TO THE ACTING HEAD OF STAFF OF THE MINISTRY OF HEALTH MR. NESLSON ZULOYAN

FROM THE AUTHORIZED PERSON OF SANOFI PASTEUR S.A. EDUARD KASYAN

Yerevan 02.05.2018

Dear Mr. Zuloyan,

Sanofi Pasteur SA participated to the open tender by the code «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» announced by RA Ministry of Health and was recognized as participant, occupying the first place for doeses 5, 11 and 13 according to the protocol No 4 of the session of commission of purchase procedure by the code «ՀՀ ԱՆ ԲՄԱՊՁԲ-2018/2» for the purposes of acquisition of vaccines, required for needs of RA Ministry of Health for 2018, dated 19.01.2018.

Then, long-term negotiations took place between Sanofi Pasteur SA and RA Ministry of Health regarding a number of issues, in the result of which we inform that the provision of price only in AMD in the contract of acquisition of vaccines is not accepetable for Sanofi Pasteur SA, as possibility of submission of price offers by the participants and conclusion of contract in foreign currency was provided by the invitation of the tender. Sanofi Pasteur SA even offered to provide the price in the agreement only in AMD in case of advance payment by RA Ministry of Health, which was not acceptable by RA Minstry of Finanace.

անգամ առաջարկ է եղել՝ Պայմանագրում գինը նախատեսել միայն ՀՀ դրամով՝ ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կանխավճարի վճարման դեպքում, ինչը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից համարվել է ոչ ընդունելի։

Հարգանքով,

Էդուարդ Կասյան

Regards,

Eduard Kasyan